# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌԻ ՄԱՐԶ
# ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Լոռու մարզի Գուգարք գյուղ, Հեռ. 5-24-76

N 182
*15 հոկտեմբեր 2018թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ**
**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**
**Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Խաչատրյան.

Ներկայացնում ենք Գուգարք համայնքի ղեկավարի որոշումներ 168-171:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Աշոտ Աշուղյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզի
Գուգարք համայնք
Հեռ. 5-24-76

# ՈՐՈՇՈՒՄ N 168

06-031-0044-0014 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Հիմք ընդունելով քաղաքացի Սուրեն Յուրիկի Աբովյանի դիմումը, անհատ ձեռներեց Գ. Վեքիլյանի կողմից կազմված հատակագիծը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510Ն օրենքի 7-րդ հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387Ն որոշմամբ, ըստ օրենքի ժառանգության իրավունքի N3777 և 3778 վկայագրով.*

*Համայնքապետը որոշեց.*

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-031-0044-0014 ծածկագրի տակ գտնվող 0,1742հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1961թ. կառուցված 72.05քմ մակերեսով կիսանկուղի, 1970թ. կառուցված 12.91 քմ մակերեսով կիսանկուղի, 1961թ. կառուցված 70.53 քմ մակերեսով բնակելի տան, 1970թ. կառուցված 16:18քմ մակերեսով բնակելի տան, 1961թ. կառուցված 5.06քմ մակերեսով բնակելի տան, 1961թ. կառուցված 21.68քմ մակերեսով բաց պատշգամբի, 1961թ. կառուցված 4.7 քմ մակերեսով աստիճանահարթակի, 1970թ. կառուցված 31.92քմ մակերեսով ավտոտնակի, 1990թ. կառուցված 10.98քմ մակերեսով թոչնանոցի նկատմամբ Սուրեն Յուրիկի Աբովյանի (ծնվ. 03.01.1975թ.) սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.1742 հա հատկացված հողամասն անհատույց, սեփականության իրավունքով վերահատկացնել Սուրեն Յուրիկի Աբովյանին:
3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
4. Հողամասի սահմանները որոշվում են որակավորման վկայական ստացած անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
5. Անշարժ գույքի փոստային հասցեն է՝ գ. Գուգարք 6 փողոց, տուն 10:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում:

Համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզի
Գուգարք համայնք
Հեռ. 5-24-76

# ՈՐՈՇՈՒՄ N 169

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0032-0017 ԾԱԾԿԱԳՐԻ ՀԱՅԿ ՌՈՒԲԵՆԻ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ (ՀԱՄԱՁԱՅՆ 10.06.2009թ. ՏՐՎԱԾ N 1873337 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ) ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> 22 օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետով, 22 կառավարության 29. 12. 2005թ. N 2387Ն* որոշմամբ`

*Համայնքապետը որոշեց.*

Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0032-0017 ծածկագրի, Հայկ Ռուբենի Անտոնյանին պատկանող բնակելի տան համար հաստատել հետևյալ փոստային հասցեն`
*գ. Գուգարք, Շինարարների փողոց տուն 37/1:*

Գուգարքի համայնքապետ`                Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզի
Գուգարք համայնք
Հեռ. 5-24-76

10.10. 2012

# ՈՐՈՇՈՒՄ N 170

06-031-0009-0009 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՔՈՏԵՋԻ, ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Հիմք ընդունելով քաղաքացի Քաջիկ Սարգսի Անդրեասյանի դիմումը, <<Է. Ապրեսյան>> ՄՊԸ կողմից կազմված հատակագիծը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510Ն օրենքի 7-րդ հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387Ն որոշումով՝*

*Համայնքապետը որոշեց.*

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-031-0009-0009 ծածկագրի տակ գտնվող 0,05753 հա քոտեջի կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1989թ. կառուցված 46,99 քմ մակերեսով քոտեջի, 1989թ. կառուցված 8,5 քմ մակերեսով հավանոցի, նկատմամբ Քաջիկ Սարգսի Անդրեասյանի (ծնվ. 05.03.1975թ.) սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0,05753 հա հատկացված հողաման անհատույց, սեփականության իրավունքով վերահատկացնել Քաջիկ Սարգսի Անդրեասյանին:
3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
4. Հողամասի սահմանները որոշվում են որակավորման վկայական ստացած անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
5. Անշարժ գույքի փոստային հասցեն է՝ գ. Գուգարք Էներգետիկների 2-րդ փողոց, 2
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում:

Համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   N 171

15.10.2018

## ՄՈՑՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 48 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝*

Գուգարքի ներքոհիշյալ բնակիչներին տալ դրամական օգնություն.

1. Մելքոնյան Բավական- 50000դր.
2. Գրիգորյան Քրիստինե – 55000դր.
3. Կիրակոսյան Գայանե – 60000դր.
4. Պողոսյան Արսեն – 50000դր.
5. Բաղրամյան Ալինա – 70000դր.:

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝   Ա.ԱՇՈՒՂՅԱՆ